¶ԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա ¶ Ա Հ

ք. Երևան “19” նոյեմբերի 2010 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 43 Ա/Ք

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2010» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշումը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 19-ի N 1625-Ա/Ք հրամանը, ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2010» մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) և հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայք:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական

PDF created with pdfFactory trial version www.pdffactory.com

փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Լ. Մարդոյան)՝

1) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի ընդունումը և հաշվառումը,
2) մրցույթի հայտ ներկայացրած ասպիրանտների, գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,
3) 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել հայտերի տեխնիկական ստուգումը և դրանց տրամադրումը փորձագիտական մասնագիտական խորհուրդներին,
4) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,
5) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել գիտական փորձաքննության արդյունքները, դրանք ներկայացնել փորձագիտական մասնագիտական խորհուրդներին,
6) 10 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնել գիտական թեմաների ղեկավարներին,
7) մինչև 2011թ. փետրվարի 25-ը կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Նախագահ՝ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

PDF created with pdfFactory trial version www.pdffactory.com